



## ԱՐԱՎՆԻ ՄԵՍՐՈՓՅԱՆ

### ՏՊԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱՅԼԻՆԵՆ

Ըստանի մեջ 1937 թվականին տեղի ունեցան արվեստի առաջին ողիմպիական մրցումները։ Այդ օրերուն ես առիթն ունեցած ունենալու թալինի ու շրջակա գյուղերու հայ և քուրդ (եզիդի) արվեստագետները և տեսներու անոնց ինքնարուի արվեստի բազմապիսի շնորհքները, լեռնային ազատ շունչով տոգորված երգն ու պարը, Հովվական մեղեղիները, հակա թմբուկներու աշեղագոռ զարկերը, կշռութավոր խալերը, մշեցիներու և սաստանցիներու ավանդական հայկական ժողովրդական պարերը, քրդուհիներու ազատ ու ճկուն պարերը իրենց տոհմային խայտարկետ տարադներուն մեջ։ Այս բոլորը անմոռանալիորեն տպավորվեցան հոգլուս մեջ։

1896 և 1915 թվականներու կոտորածներն փրկված հայ ժողովուրդի մեկ մասը՝ Թաղինի շրջակա գյուղերը հաստատված գաղթականներ էին, մեծ մասամբ մշեցի և սաստանցի։ Այդ օրերուն ես բախտ ունեցա անոնցմեն մեկ քանին նկարել գեղջկական տարադներով և կատարողական ձևերու մեջ։ Ողիմպիականը վերջանալի հետո, անոնք հրավիրեցին զիս, որ իրենց գյուղը տեսնեմ և վայելեմ իրենց հովոցներն ու յայլավաները, կաթն ու մածունը, սերն ու վարագը, մեղմ ու լեռնային բանջարները, մանավանդ Թաղինի 42 սաստորակ աղբյուրներու շուրջը և լեռնային մաքուր օդը։

Վերջին 16 տարիներու ընթացքին, ամեն դարնան, երբ քուրդ մասավորական ընկեր-

ներս Թաղին կերթային, ինձ կհրավիրեիս իրենց ընկերանալու ։ Շատ կփափազին, բայց այդ փափազ չէր իրականանար։ Վերջին անգամ ես այնտեղ գացի գյուղատնտեսութեարեկամուհին՝ Մարտ Պապյանի հետ։ Մացիսի 6-ին, առառուն կանուս, թալինցի երկու ընկերներու հետ, ինքնաշարժով ճամբաւանք գեպի թալին։

Չորս ու կիս ժամ ասֆալտապատ ուղիներով՝ ծաղկալից գաշտերե, գյուղերի ու լեռների անցանք։ Օտար երկրի Հայրենիք վերադարձած կարույցին մը պես կլափիի աշուածութեան մասերը բոլորովին այլ հրապուցկ մը զիս գրավեցին։ Լեռներու փեշերուն կառչած գեղջեցկատեսիլ գյուղեր, իրենց շուրջը կոլտնտեսային խնամված հողեր, դաշտային անհուն տարածություններ, հոյակապ հուշարձաններ, խաչքարեր, ջրվեժներ, նորակառուց կամուրջներ և Արագագի գագաթները բարձրացող ճամբաւանքուներու…

Մեղի ընկերացող ճարտարապետ Ազիդ Խաչատուրյանը, որ Մասունցի մըն էր, փոքր տարիքեն Թաղինի մեջ մեծցած և երեան ուսած, մեղի ծանոթացուց ճամբաւուն վրա գտնիլած հնտաբրբական և պատմական բոլոր վայրերը, գյուղ թի հուշարձան։ Մեր ուղեգիծը հետևյալն էր. Երևան—Հաղթանակի կամուրջ—Կոնյակի նորակերտ գործարան—Նոր-Կիլիկիա—Գարեջրի նոր գործարան—Էջմիածին—Աշտարակ (իր անվանի ձոր և կամուրջը)—Ազարակ գյուղ (պարտեղներով շրջապատված սիրուն տու-

ներ, դաշտեր, սերկանիլի ծաղկած և բուրում-նավես այդիներ) — Գոշ գյուղը: Այստեղ Աշուա Երկաթի սիրած կնոջ գերեզմա-նը կա, վրան՝ տուփ քարի վրա բացառիկ նրբությամբ քանդակված խաչքարով, որ կկարծվի Մխիթար Գոշի ձեռակերտը ըլլալ (Հայաստանի պատմական հուշարձաններու պահպանության կոմիտեն բացատրական տախտակ մը զետեղած էր): Քիչ հեռում գի-տեցինք ժայռու լնոներու ստորոտը, հո-յակապ տեսքով, կարմիր տուփ քարի երանդ-ներով Թալինի անվանի տաճարը, շինված Գագիկ Արծրունի թագավորի օրով: (1951 թվականին նոր պեղումներու միջոցով թա-գավորական պալատներ գտնվեցան այս տա-ճարին շուրջը): Հասանք Բազմաբերդ (ան-ցյալին Աղջաղալա գյուղը), չորս կողմը բարձրաբերձ բլուրներ և ցանքատարածու-թյուններ: Այս գյուղին մոտ զետեղված էին երկաթյա հսկա խողովակներ, որոնք Ալա-գյաղի լանջերին հոսող 42 ջուրերը կամրա-րեն և կրամնեն շրջակա գյուղերուն (այս աշխատանքը կատարած է մեր ուղեկից Աղիկ Խաչատրյանը): Այդ սառնորակ, բյու-րեղի պիս հոտակ և անմահական ջուրին խմեցինք: Բազմաբերդի բարձունքնեն դիտ-ված համայնապատկերը չքնաղ էր. զմբքի-տավառ կանաչությունը տարածված էր ամեն կողմ, և այդ կանաչին մեջ՝ տասնյակներով գյուղեր: Պատկերավոր է Շամիրամ գյուղը իր նորակերա տուփ քարի բարձրացած քանի մը շինություններով, որոնցմե մեկը գյուղի դպրոցն է իր հարակից շենքերով, ակում-բով և մարզադաշտով: Ահա մեր աշքին տակ պարզվող Կաքավան գյուղը, որոն շուրջը, բարձրագիր լլուրներուն վրա՝ սպիտակ մեծ ու փոքր ժայռերը արևի ճառագայթներուն տակ, պլայացող հսկա լույսերու տպավո-րությունը կուտային: Կաքավան կանաչագեղ գյուղի դաշտավայրին մեջ տեսանք նորա-կերտ դպրոցը՝ իր սպիտակ ժայռերու քարե-րով շինված: Ինձ կվարմացներ այն, որ մեր անցած բոլոր գյուղերը ունեին իրենց ինքնուրուցն կյանքը և ավանդությունները: Որքա՞ն տպավորիչ են մեր ճամրուն վրա հանդիպած այս շեն ու շքնաղ գյուղերը: Կի-րակնօրյա եռուցես, Գյուղացիներն ամեն տարիքի մարուկի, մարու ու կոկիկի հադ-

ամաց, ինկեր են այլիներու ու դաշտերու մեջ  
զբուժնելու Որքա՞ն հաճելի է, երբ մեր ինքնաշարժը ամեն նոր հուշարձանի առջև  
կանգնած պահին, համատարած լեռնային  
լսությունը հանկարծ կիսվի մոտակա զյուղեմ լսվող ժողովրդական երգի մը հսկայական ելեխներով, և կամ բլուրի մը վրային  
մեղ համայնչ խաչնարած հովիվին սրինգին  
նվազը: Լեռնային այս զմայլելի բնության  
մեջ չինչ կապույտ երկնակամարը, անոր մեջ  
միրժված լեռներ, գագաթեն մինչև փեշերը  
ձյունասպիտակ: Զմրխտագեղ վառ կանաչը  
փալեր է ամեն կողմ, դաշտերը լեցուն  
են գույնզգույն ծաղկիներով, քարածայուերը  
զանազան երանգներ ունին հանքային բա-  
զագություններու համաձայն: Գյուղական  
գովազներու հողերը սահմանագծված են  
խոշոր քարերով: Ամեն գյուղ ունի իր յոթ-  
նամյա կամ միջնակարգ նորակերտ տուֆ  
քարե դպրոցը իր հարակից խաղագետնով և  
ակումբով: Բազմաբերդեն երբ սկսանք  
բարձրանալ սարն ի վեր դեպի Վերին Բազ-  
մարերդ, տեսանք Սառնաշեն զյուղի նորա-  
կերտ միջնակարգ զարդոցի լախանիստ շեն-  
քը և ակումբը: Այս գյուղը լեռնային հիա-  
նալի տեսարան ունի: Իր ստորոտին կանց-  
նին փրփրացող գիտակներ: Մեր համբոր-  
դությունը վերջացավ Վերին Բազմաբերդի  
յոթնամյա դպրոցին առջև, կառուցված մեղ  
ուղեկցող Ազիզ Խաչատուրյանի նախագծով:  
Այդ շենքը այցելելի վերջ առաջնորդվեցանք  
մոտակա տուն մը, որ Խաչատուրյանի ծնող-  
քին կպատկաներ: Նահապետական բազման-  
դամ ընտանիքը՝ Հայր, մայր, հինգ եղբայր,  
հարսներ, թոռներ, ազգականներ և դրացի-  
ներ մեզ դիմավորեցին, մեկ խոսքով փոքր  
բանակ մը, կազմված՝ միծ մասմբ սաստմ-  
ցիներե, որոնք աճեր ու բազմացեր էին  
իրենց հարազատ այս լեռներուն մեց:

Ավելորդ է ըստեւ, թե ի՞նչ մեծ ախորժակով մասնակցեցանք սասունցի ընտանիքի նահապետական ճոխ սեղանին։ Տան մայրիկը, ծերունի, բայց առուզդ թանկագինը, իր ծննդավայր Սասունի մեջ հայտնի գեղեցկուհի մը եղած է։ Այստեղ կարժե հիշատակել սասունցի նահապետական տան մեծին ու փոքրին առանձնահատուկ շնորհքները, մանավանդ արմեստի մեջ։ Երգ ու պար,

երաժշտություն, բանաստեղծություն, նկարչություն միացեր են այդ գյուղական երդիկին տակ: Հայկական ժողովրդական արվեստի այս ամբողջական երդիկը, որ սովորական երջանիկ ընտանիքի պայծառ դեմքն ունի, կպատկերե սասումցիներու հազարավոր ընտանիքներ, որոնք անցյալի կոտորածներեն մազապուրծ փրկվածներ ըլլալով, տասնյակ տարիների ի վեր հաստատված հայրենի հողին վրա և վերաշինած իրենց երդիկները, ազատ ու երջանիկ կապրին Սովետական Հայրենիքի մեջ: Սասումցի Խաչատրյաններու տան մեջ, իրենց ընտանիքի անդամներեն զատ, որոնց մեծ մասը մասնագետներ են, բոլորն ալ Երևան ուսած՝ գյուղատնտես, ճարտարապետ, ճանշացան նաև մշեցիներ և սասումցիներ, որոնք նույնակես ավարտելով Երևանի բարձրագույն մասնագիտական դրագոցները, Վերին Բազմաբերդի և շրջակա գյուղերու միացյալ կոլտնտեսության մեջ ծառայողներ էին:

\*\*\*

Վերջալուսին հրաժեշտ առինք Խաչատրյան ընտանիքներ: Գյուղի կտուրներուն վրա կանգնած հարևաններ, որ իրենց կիրակնօրյա սեղանները փուած էին, մեզի ողջերթ

կմաղթեին: Վերջին անգամ կրկին դիտեցի 75 տուն ունեցող այս փոքրիկ գյուղը, որուն բնակիչները մհծահոգի, աշխատասեր հայրենասերներ են և այսօր կապրին ապահով և երջանիկ կյանքով: Բազմաբերդի գյուղացիության մեծ մասը կզբաղի հողագործությամբ, անասնապահությամբ և մեղվարուծությամբ: Երբ մեր ուղեկցի՝ Ազիզ Խաչատրյանի և իր եղբոր՝ Խաչիկի հետ ինքնաշարժ նստանք, արդեն Ալագյազի ցուրտը պատեց մեզ և մենք իմացանք, որ Ալագյազ լեռան գագաթին միայն 7 կիլոմետր հետավորության վրա էինք: Թալինեն մինչև Երեվան ցուրտը քիշ-քիշ մեղմացավ: Ասֆալտապատ ճամբան ամբողջ երկայնքին կշողար լուսնի լույսով: Կես գիշերը անցած էր, երբ այս հիանալի և անմոռանալի ճամբորութեաններուն հասանք Երևան, մեր սիրելի Հայրենիքի այնքան քաղցր, հրաշակերութայրաքաղաքը, որուն գլխավոր փողոցներուն վրա, հազարավոր ժողովորդ թատրոններեն, կինոներեն և զրոսավայրերեն ուրախ և երջանիկ կվերադառնար տուն և էլեկտրական լույսերով ողողված տրոլեյբուսներ, տրամվայներ, ավտոբուսներ և տակսիներ օր-ցերեկի պիս եռուզեռի մեջ էին դեռ:

